# CALFRESH ԾՐԱԳՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍ Ա

| ԳՈՐԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐԸ |
|---|---|
| ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏՈՂԻ ԱՆՈՒՆԸ | ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐԸ |

**Կարդացեք ու Ձեր անվան սկզբնատառերով նշեք ներքոնշյալ բոլոր կանոնները:**

| Անվան սկզբնատառեր | Ես հասկանում եմ. |
|---|---|
| | Գումարը պետք է պահվի ֆինանսական հիմնարկությունում, ինչպես օրինակ՝ բանկ, վարկային միություն, խնայողություններ կամ վարկ, և այլն: |
| | Ես պետք է տրամադրեմ հաշվի տեղեկության ապացույց: Հաշվի տեղեկության օրինակներից են՝<br>● Բանկի հաշվետվություն կամ անդորրագիր բանկից, վարկային միությունից, և այլն, որը ցույց է տալիս բանկի անվանումն ու հասցեն:<br>● Հաշվի մնացորդներն ու գործունեությունը՝ սկսած Սահմանափակ հաշվի համաձայնագիրը ստորագրելու ամսաթվից:<br>● Հաշվի(ների) վրա նշված անունը(ները): |
| | Ես հասկանում եմ, որ Սահմանափակ հաշվից(ներից) հանված գումարների ծախսելու ապացույցի օրինակներից են՝<br>● Չեղարկված չեկը(երը):<br>● Ստորագրված հաշվետվություն(ներ) ապրանքի կամ ծառայությունների տրամադրողից(ներից), որը ցույց է տալիս վճարված ծախսի(երի) տեսակն ու գումարը:<br>● Ստացող(ներ): |
| | Այս Սահմանափակ հաշվի համաձայնագիրը դադարեցվում է՝<br>● Երբ ես աշխատողին չեմ տրամադրում Սահմանափակ հաշվի մասին ապացույց:<br>● Երբ իմ ընտանիքը դադարեցնում է ստանալ CalFresh նպաստները:<br>● Երբ Սահմանափակ հաշիվը փակվում է:<br>● Եթե սահմանափակ հաշվին վերաբերվող օրենքը փոխվում է: |
| | Սահմանափակ հաշվում եղած խնայողությունների առավելագույն գումարի սահմանափակում գոյություն չունի: Ես կարող եմ ունենալ մեկից ավելի սահմանափակ հաշիվ, ու բոլոր սահմանափակ հաշիվների գումարները չեն հաշվարկվում իմ ընտանիքի ռեսուրսների սահմանափակման դիմաց: |
| | Եթե իմ CalFresh նպաստները դադարեցվեն որևէ պատճառով, և եթե ես կրկին դիմեմ CalFresh նպաստների համար, և նպաստների ստացման ընդհատում է տեղի ունենում, ապա իմ ընդհանուր հաշվարկելի ռեսուրսները, ներառյալ՝ դրամը Սահմանափակ հաշվում(ներում), չեն կարող գերազանցել $2,000/$3,250 ռեսուրսների սահմանափակումը: Դիմելիս ես պետք է նոր Սահմանափակ հաշվի համաձայնագիր ստորագրեմ, որպեսզի նոր Սահմանափակ հաշիվ բացեմ: Սահմանափակ հաշվի համաձայնագիր է պահանջվում, եթե օգնության ընդհատում է տեղի ունենում: |
| | Եթե իմ Սահմանափակ հաշվից(ներից) գումար է հանվում ու չի ծախսվում թույլատրելի ծախսերի համար, նույնիսկ եթե ես ունեմ մահվան հետ կապված կամ կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի ծախսեր, ապա հանված գումարը հաշվարկվելու է որպես ռեսուրսների սահմանափակման մաս, և վարչաշրջանը կվերագնահատի բոլոր ռեսուրսները: |
| | Անհրաժեշտ է, որ իմ ռեսուրսները լինեն մոտ $2,000 ռեսուրսի սահմանափակմանը ($3,250, եթե կենցաղի առնվազն մեկ անդամ հաշմանդամ է/60 կամ ավելի բարձր տարիքի է) արտակարգ իրավիճակների կամ այլ ծախսերի համար, նախքան ես Սահմանափակ հաշիվ կբացեմ: |
| | Եթե ես կես տարին մեկ եկամուտ և կենցաղի փոփոխություններ եմ զեկուցում ու գումարներ հանում կես տարվա ժամանակահատվածում, ապա ինձանից պահանջվում է զեկուցել այդ հանումները եկամտի հաջորդ զեկույցում (SAR 7) կամ վերավկայագրման ընթացքում: Եթե ես կես տարին մեկ զեկուցող կենցաղ չեմ, ապա ես պետք է զեկուցեմ այդ հանումները դրանց կատարումից 10 օրվա ընթացքում: |
| | Սահմանափակ հաշվի(ների) վրա գոյացված տոկոսը պետք է դրվի հաշվի(ների) վրա: Եթե տոկոսը ինձ է ուղարկվում, ես այն պետք է հետ դնեմ Սահմանափակ հաշվի վրա: |
| | Սահմանափակ հաշվում կուտակված դրամը կարող է ծախսվել միայն մեկ կամ ավել թույլատրելի ծախսերի համար, որոնք ուղղակիորեն առնչվում են՝<br>● Իմ բնակության համար տուն գնելուն:<br>● Նոր բիզնես սկսելուն:<br>● Հաշվի տիրոջ կամ նրա խնամարկյալի(ների) կրթությանը կամ աշխատանքի համար ուսուցմանը: |

## Վկայագիր

Ես կարդացել եմ տեղեկատվական էջը: Ես հասկանում եմ կանոններն ու իմ պարտականությունները, ինչպես նշված է վերևում, Սահմանափակ հաշիվ բացելու ու պահպանելու համար, ինչպես նաև այն, որ անհրաժեշտ է, որ ռեսուրսները լինեն մոտ իմ $2,000 ռեսուրսի սահմանափակմանը կամ $3,250 (եթե կենցաղի առնվազն մեկ անդամ հաշմանդամ է կամ 60 կամ ավելի բարձր տարիքի է) արտակարգ իրավիճակների կամ այլ ծախսերի համար, նախքան ես **Սահմանափակ հաշիվ** կբացեմ: Ես կհարցնեմ իմ աշխատողին, եթե վստահ չեմ, թե ինչ է թույլատրելի ծախսը, ինչ ապացույց է հարկավոր կամ երբ է պետք այդ ապացույցը տանել վարչաշրջան:

| ԿԵՆՑԱՂԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄԻ ԿԱՄ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՆՇԱՆԸ | ԱՄՍԱԹԻՎ |
|---|---|
| ՎԿԱՅԻ ԵՎ/ԿԱՄ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՆՇԱՆԸ | ԱՄՍԱԹԻՎ |